**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<25>> ----------07-------------------2025թ.                N ՄՊ/734 -Ա

ք. Արմավիր

**ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ «ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի հուլիսի 24-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել Թագուհի Մարգարյանին:
2. Թագուհի Մարգարյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան՝ 318304 (երեք հարյուր տասնութ հազար երեք հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

2025-07-25 17:12:22 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆՑ-ի կողմից

**ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**